

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**РЕСПУБЛИКА  
АРМЕНИЯ**

**ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ  
ԱՆՎ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**



**ЕРЕВАНСКИЙ УНИВЕРСИТЕТ  
ИМ. МОВСЕСА ХОРЕНАЦИ**

20.12.2013 թ.

## **ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6**

**ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ № 6 ՆԻՍԻ**

**Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները՝**

1. Ղազարյան Հայկ
2. Աղաբաբյան Արթուր
3. Դավթյան Կարինե
4. Հակոբյան Յուրա
5. Միկիլյան Մարինե
6. Քթրյան Գագիկ
7. Նիկողոսյան Արամ
8. Գալստյան Բակուր
9. Կարագուլյան Հասմիկ
10. Ավեյան Ջյունիկ
11. Ֆրդոյան Աննա

**Օրակարգում դրված էր՝**

1. Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի ռեկտորի տարեկան հաշվետվությունը,
2. Խորհրդի անդամների թափուր տեղերի համալրման հարցը,
3. Դրամաշնորհի շահելու վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
4. Դրամաշնորհի բյուջեի քննարկում:

**Ելույթ ունեցան՝**

1. Ռեկտոր Ա. Աղաբաբյանը ներկայացրեց Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի 2013 թ-ի տարեկան հաշվետվությունը:

2. Գ. Քթրյանը նշեց, որ խորհրդի անդամներ Ավեյան Ջյունիկը վերցրել է տարկետում, իսկ Ֆրոդոյան Աննան ավարտում է բուհը և խորհրդում նրանց տեղը մնում է թափուր և անհրաժեշտ է նոր անդամների թեկնածություն: Առաջարկվեց Սարգսյան Տիգրանի և Տաշյան Ոսկեհատի թեկնածությունը:
3. Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Գ. Քթրյանը տեղեկացրեց, որ ԵՄԽՀ-ն շահել է դրամաշնորհ բուհում որակի ապահովման գործընթացը բարելավելու նպատակով և համառոտ ներկայացրեց դրամաշնորհի շրջանակներում նախատեսվող գործողությունները և դրանց կատարման ժամանակահատվածը:
4. Ռեկտոր Ա.Աղաբաբյանը ներկայացրեց դրամաշնորհի շրջանակներում նախատեսվող գործողությունները և գնումները, առաջարկեց գնումների իրականացման համար ստեղծել երկու տիպի հանձնաժողով՝ գույքի, համակարգչային տեխնիկայի, տպագրության և գրենական պիտույքների գնման հանձնաժողով և խորհրդատվական ծառայությունների գնման հանձնաժողով:

### **Որոշեցին՝**

1. Հաստատել ռեկտորի տարեկան հաշվետվությունը,
2. Կառավարման խորհրդի կազմից հեռացնել Ավեյան Ջյունիկին և Ֆրոդոյան Աննային և ընդգրկել Սարգսյան Տիգրանին և Տաշյան Ոսկեհատին :
3. Դրամաշնորհի գնումների վերաբերյալ ստեղծել 2 տիպի հանձնաժողով՝

ԵՄԽՀ-ի գույքի, համակարգչային տեխնիկայի, տպագրության և գրենական պիտույքների գնման հանձնաժողով, որի նախագահ նշանակել Ա.Աղաբաբյանին, իսկ հանձնաժողովի կազմում ընդգրկել Գ. Քթրյանին, Մ. Հակոբյանին, Կ. Գասպարյանին, Տ. Սարգսյանին, Կ. Սարգսյանին,

ԵՄԽՀ-ի խորհրդատվական ծառայությունների գնման հանձնաժողով, որի նախագահ նշանակել Ա. Աղաբաբյանին, հանձնաժողովի քարտուղար նշանակել Կ. Սարգսյանին, իսկ հանձնաժողովի կազմում ընդգրկել Գ. Քթրյանին, Լ. Մնացականյանին և Կ. Սարգսյանին:

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

*Հ. Ղազարյան*

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՂԱՐ՝**

*Հ. Կարազույյան*